ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 36-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 25-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 25-Լ հրամանով հաստատված հավելվածի՝

1) 13-րդ կետի 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետ.

«2.1) իրավաբանական բաժանմունքը,»,

2) 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետ.

«19.1. Իրավաբանական բաժանմունքի գործառույթներն են՝

1) Պարեկային ծառայության գործողությունների, անգործության, վարչական ակտերի դեմ ներկայացված հայցերով դատական ներկայացուցչության ապահովումը,

2) Պարեկային ծառայության գործողությունների, անգործության, վարչական ակտերի դեմ բերված վարչական բողոքներով բողոքարկման վարույթի իրականացումը,

3) Պարեկային ծառայության գործունեության ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը և դրանց ներքին շրջանառության ապահովումը,

4) Պարեկային ծառայության գործունեության ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրությունը և դիրքորոշման ներկայացումը,

5) Պարեկային ծառայության ստորաբաժանումներին իրավական խորհրդատվության տրամադրումը,

6) Պարեկային ծառայության ղեկավարության համար իրավական բնույթի տեղեկանքների նախապատրաստումը,

7) Պարեկային ծառայությունից պահանջվող տեղեկատվությունը տրամադրելու հիմնավորվածության վերաբերյալ կարծիքի ներկայացումը,

8) Պարեկային ծառայությանը հասցեագրված վճիռների և որոշումների ուսումնասիրությունը, հաշվառումը, վերլուծությունը, կատարման նկատմամբ հսկողության իրականացումը:»,

3) 27-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետ.

«27.1. Պարեկային ծառայության գործողությունների, անգործության, վարչական ակտերի դեմ բերված վարչական բողոքների դեպքերում դրանք քննելու իրավասություն ունեցող վերադաս պաշտոնատար անձ է հանդիսանում Պարեկային ծառայության պետը կամ նրա կողմից լիազորված տեղակալը:»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին:

ԳՆԴԱՊԵՏ **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«02»___07___ 2021թ.

քաղ. Երևան